ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

<<24>> հունվարի 2019 թվականի գյուղ Տեղ

Մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 9 անդամներից՝

1 Սևադա Դանիելյանը
2 Սենիկ Փարսյանը
3 Գառնիկ Կարապետյանը
4 Արգամ Լալայանը
5 Արտակ Աղաջանյանը
6 Համեստ Հակոբյանը
7 Սիլվա Գալստյանը
8 Նարինե Ջհանգիրյանը

Բացակայում էին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու անդամներ՝

1 Մասիս Մկրտչյանը

Մասնակցում էր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը:

Հրավիրված էին՝ Արավուսի, Կոռնիձորի, Քարաշենի, Խնածախի, Վաղատուրի, Խոզնավարի վարչական ղեկավարներ, համայնքի բնակիչներ:

Նիստը վարում էր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար Ներսես Շադունցը:

Նիստի արձանագրումն ապահովում էր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Բաղդագյուլյանը:

Նիստն սկսվեց ժամը 12:00-ին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի **ավագանին.**

1. **Լսեց Նիստի օրակարգի մասին:** Նիստը վարող Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի (այսուհետ նաև՝ Համայնք) ղեկավար՝ Ներսես Շադունցը ներկայացրեց նիստի օրակարգի նախագիծը և առաջարկեց հաստատել այն: Այլ առաջարկություններ չեղան:

Որոշեց (N 1)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 24-ի նիստի հետևյալ օրակարգը.

1. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 31-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**
2. **Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2018 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:**
3. **ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 16-ի N 5-Ա որոշումը, «Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և կազմակերպության տնօրենի պաշտոնում Տեղ համայնքի ղեկավարի ներկայացրած թեկնածուի նշանակմանը համաձայնություն տալու մասին:**
4. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի և <<Սերգեյ-Դավիթ>> ՍՊԸ-ի միջև կնքված վարձակալության պայմանագրում նախատեսվող փոփոխությունը քննարկելու մասին:**

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

2. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 31-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**
   (զեկուցող՝ Համայնքի ղեկավար Ներսես Շադունց):

Որոշեց (N 2)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ կետով. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-7, դեմ-0, ձեռնպահ-1 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 31-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   1) Որոշման 1-ին կետի բ) ենթակետի «ծախսերի գծով՝ 173309,3 հազ. դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 185002,3 հազ. դրամ» բառերով:
   2) Որոշման 1-ին կետի գ) ենթակետի «դեֆիցիտը (պակասուրդը)՝ 4000,0 հազ. դրամ» բառերը փոխարինել «դեֆիցիտը (պակասուրդը)՝ 15693,0 հազ. դրամ» բառերով:
   3) Որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի նախատեսված հատվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1)
Ձեռնպահ է քվեարկել ավագանու անդամ Սենիկ Փարսյանը:

3. Լսեց՝ Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2018 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար Ներսես Շադունց):

Որոշեց (N 3)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 32-րդ կետով և 77-րդ հոդվածով, նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2018 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:
2. ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

4. Լսեց՝ ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 16-ի N 5-Ա որոշումը, «Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և կազմակերպության տնօրենի պաշտոնում Տեղ համայնքի ղեկավարի ներկայացրած թեկնածուի նշանակմանը համաձայնություն տալու մասին:

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար Ներսես Շադունց):

Որոշեց (N 4)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ-7, դեմ-1, ձեռնպահ-0, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել՝
   1.1 Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 16-ի ««Տեղ համանքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 5-Ա որոշումը:
   1.2. «Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Համաձայնություն տալ «Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում Տեղ համայնքի ղեկավարի ներկայացրած թեկնածու Մարտունիկ Արամի Պողոսյանի /հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ գ. Տեղ փող. 39 տուն 3, անձնագիր AG 0534606, տրված 05.09.2005թ. 032-ից/ նշանակմանը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 7, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0)
Դեմ է քվեարկել ավագանու անդամ Սիլվա Գալստյանը:

5. Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի և <<Սերգեյ-Դավիթ>> ՍՊԸ-ի միջև կնքված վարձակալության պայմանագրում նախատեսվող փոփոխությունը քննարկելու մասին:

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար Ներսես Շադունց):

Որոշեց (N 5)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 1-ին մասով, 468-րդ հոդվածի 1-ին մասով, ու նկատի ունենալով <<Սերգեյ-Դավիթ>> ՍՊԸ-ի տնօրեն Կարինե Մինասյանի 16.01.2019թ. համայնքի ղեկավարին ներկայացված դիմումը, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0, քվեարկության արդյունքներով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ընդունել ի գիտություն ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի և <<Սերգեյ-Դավիթ>> ՍՊԸ-ի միջև 2010 թվականի փետրվարի 19-ին կնքված (գրանցված՝ Գորիս նոտարական տարածքի նոտարի սեղանամատյանում N 270) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության պայմանագրում առկա անճշտությունների մասին տեղեկությունը:
2. Սույն որոշման 1-ին կետով նշված անճշտությունների ուղղման համար տալ համաձայնություն հողատարածքի չափը 41,5755 հա-ի փոխարեն նախատեսել 38,909 հա, հիմք ընդունելով որակավորում ունեցող <<Նարեկ և Մարտին>> ՍՊԸ-ի կողմից չափագրման արդյունքներով կազմված ճշտված հողամասի հատակագիծը:
3. Վարձակալության պայմանագրի ժամկետը նախապատվության իրավունքով երկարաձգել մինչև 2044 թվականը:
4. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով <<Սերգեյ-Դավիթ>> ՍՊԸ-ի միջև կնքել համաձայնագիր:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

Օրակարգի բոլոր հարցերն սպառվեցին: Նիստն ավարտվեց ժամը 14:00-ին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ավագանու անդամներ՝

1	Ս. Դանիելյան
2	Հ. Հակոբյան
3	Ս. Փարսյան
4	Գ. Կարապետյան
5	Ա. Աղաջանյան
6	Ա. Լալայան
7	Ս. Գալստյան
8	Ն. Ջհանգիրյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ ***Ներսես Շադունց***